ՀԱՅԱՍՏԱՆԻ ՓՄՁ ԶԱԿ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՊԱՀՆՈՐԴԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

N ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/2

ք. Երևան «28» փետրվարի 2018թ.

«Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամը ի դեմս տնօրեն Լ. Մնացականյանի, որը գործում է հիմնադրամի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Գարդիան» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա.Գևորգյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է պահնորդական ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **2,760,000 (երկու միլիոն յոթ հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:**

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու

վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է **4** էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ	<<Գարդիան>> ՍՊԸ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	Ք.Երևան, Մարգարյան նրբ.7,տարածք 23
<<Կոնվերսբանկ>> ԲԲԸ	<<Անելիք Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 1930059757870100	Հ/Հ 11800082516600
ՀՎՀՀ 02562459	ՀՎՀՀ 01273049
Տնօրեն՝Լ.Մնացականյան	Տնօրեն՝Ա. Գևորգյան
---------- Կ.Տ	---------- Կ.Տ
/ստորագրություն/	/ստորագրություն/

Հավելված N 2
«28» փետրվարի 2018թ. կնքված
ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/2 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79711130	Պահնորդական ծառայություն	-	-	276000	552000	828000	1104000	1380000	1656000	1932000	2208000	2484000	2760000	**2760000**

* *Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
<<Կոնվերսբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 1930059757870100
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝ Լ.Մնացականյան

---------- Կ.Տ
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
<<Գարդիան>> ՍՊԸ
Ք.Երևան, Մարգարյան նրբ.7,տարածք 23
<<Անելիք Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11800082516600
ՀՎՀՀ 01273049
Տնօրեն՝ Ա.Գևորգյան

---------- Կ.Տ
/ստորագրություն/

Հավելված N 1
«28» փետրվարի 2018թ. կնքված
ՓՄՁ-ՁԱԿ-ԳՀԾՁԲ-2018/2 *ծածկագրով պայմանագրի*

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության							
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	տեխնիկական բնութագիրը	չափման միավորը	ընդհանուր գինը/ՀՀ դրամ	ընդհանուր քանակը	մատուցման	
						հասցեն	ժամկետը**
1	79711130	**Պատվիրատուն՝ «Հայաստանի փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման ազգային կենտրոն» հիմնադրամ**, հասցեն՝ ք.Երևան, Մհեր Մկրտչյան 5ա **Ծառայությունը՝** պահնորդական ծառայություն, տարածքում պարտադիր թվով 1 աշխատակցի ներկայության ապահովմամբ՝ շաբաթվա բոլոր օրերին՝ ներառյալ հանգստյան և տոնական օրերին: **Աշխատանքային ժամերը՝** • Աշխատանքային օրերին - ժամը 18.00-ից միչև հաջորդ օրվա 9.00-ն, • Տոնական օրերին նախորդող աշխատանքային օրերին - ժամը 17.00-ից միչև հաջորդ օրվա 9.00-ն, • Ոչ աշխատանքային օրերին - ժամը 9.00-ից միչև հաջորդ օրվա 9.00-ն: **Կատարողը** ծառայությունների մատուցման ընթացքում կազմակերպում և ապահովում է նշված	դրամ	**2,760,000**	1	Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա	2018թ-ի մարտի 1-ից - դեկտեմբեր 2018

		հասցեում, գրասենյակի, դրան հարող տարածքների, անշարժ և շարժական գույքի, ապրանքանյութական արժեքներին նկատմամբ պահնորդական ծառայություն: **Կատարողին ներկայացվող պահանջներ՝** ա) պարտավորությունների կատարման համար տեխնիկական անհրաժեշտ միջոցներ, աշխատանքային ռեսուրսներ, մասնագիտական փորձառություն: **Կատարողին վերապահված պարտականություններ՝** ա) Անցագրային պայմանակարգի ապահովում: բ) Պահպանվող տարածքում կապի միջոցների՝ ահազանգման սարքավորումների, տագնապի ազդանշանների, տեխնիկական անվտանգության սարքավորումների հագեծվածություն՝ ծառայությունը մատուցող կառավարման կենտրոնի և հերթապահություն իրականացնող անձանց հետ մշտական օպերատիվ կապի հնարավորություն: գ) Պահնորդական կազմակերպության սեփականությունը համարվող կամ օրինական տիրապետման տակ գտնվող զենքի և օրենքով թույլատրվող անվտանգության այլ միջոցների ապահովվում: դ) Պահնորդներին՝ համազգեստի, անձը հաստատող վկայականի, և օրենքով թույլատրվող հատուկ միջոցների վերազինում: • Կատարողի կողմից պահնորդական ծառայությունների մատուցման ընթացքում գիշերային ժամերին առնվազն մեկ պարեկային այցի ապահովում: • Պահնորդի համար առանձնացված հեռահաղորդակցման միջոցի առկայություն:					

		Կատարողը՝ ա) նյութական պատասխանատվություն է կրում գողությամբ կամ հանրորեն վտանգավոր այլ արարքով պատվիրատուին (հասցված) պատճառված վնասի դեպքում, եթե վնասն առաջացել է կատարող ընկերության աշխատակցի կողմից պայմանագրի պայմանների խախտման արդյունքում: բ) ծառայություն իրականացնող պահնորդի որակավորման, պատշաճ աշխատանքի, պատվիրատուի օրինական պահանջների կատարման համար: Պահնորդին ներկայացվող պահանջներ՝ ա) նվազագույն միջնակարգ կրթություն բ) տվյալ գործունեության բնագավառում աշխատանքային փորձի առկայություն, գ) բավարար գիտելիքներ արտակարգ իրավիճակներում գործելու, փրկարարական աշխատանքներ իրականացնելու և առաջին բուժ□օգնություն ցուցաբերելու վերաբերյալ: դ) անհատական հականիշներ՝ մշտապես ներկայանալի արտաքին տեսք, հիգիենայի կանոնների խստագույն պահպանություն, ե) շփման և վարվելակերպի պատշաճ պահպանություն՝ պաշտոնատար անձանց, աշխատողների և ֆիզիկական անձանց հետ. զ) ծառայողական պարտականությունների կատարման ընթացքում հայտնի դարձած տեղեկատվության գաղտնիության պահպանություն: ՊԱՀՆՈՐԴԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ա) ապահովել անցագրային սահմանված պայմանակարգը, բ) ապահովել ներօբյեկտային Պատվիրատուի					

		կողմից սահմանված պայմանակարգը, գ) ապահովել տարածքում առկա, գույքի, ապրանքանյութական արժեքների անվտանգությունը, դ) հերթափոխն ընդունելիս ստուգել պահպանությանը հանձնվող տարածի և գույքի շրջակայքի փաստացի վիճակը և համապատասխանությունը ընդունման պահին արձանագրված վիճակին, կատարել գրառում համապատասխան մատյանում, ե) հերթափոխի ավարտին Պատվիրատուի կողմից սահմանված կարգով հանձնել պահպանվող օբյեկտը, կատարելով գրառում նախատեսված մատյանում, զ) արտակարգ դեպքերի ժամանակ մինչև իրավապահ մարմինների աշխատակիցների ժամանելը միջոցներ ձեռնարկել դեպքի վայրի հետքերի պահպանման և կողմնակի անձանց մուտքը թույլ չտալու ուղղությամբ, բացահայտել դեպքի ականատեսներին, արձանագրել նրանց տվյալները, է) ստուգել պահպանվող տարածքից դուրս բերվող բեռների վերաբերյալ տեղեկատվությունը համապատասխան անձանց միջոցով, ը) տվյալ տարածքում իրավախախտում կատարած անձին իր իրավասությունների շրջանակում սահմանված կարգով վնասազերծել, թ) անհրաժեշտության դեպքում կատարել պահպանվող օբյեկտի տարածք մտնող և տարածքից դուրս եկող քաղաքացիների անձնական խուզարկություն, նրանց մոտ գտնվող առարկաների զննում, ժ) ոչ ստանդարտ իրավիճակներում, հնարավոր վտանգների և դրանց առաջացման ռիսկերի մասին զգուշացնել նկատված խախտումների մասին տեղյակ					

		պահել ղեկավարությանը, համաձայնեցված կարգով՝ ոստիկանությանը, իրավասու այլ ծառայություններին, ի) իր աշխատանքի ընթացքում արտակարգ իրավիճակների արձանագրման դեպքերում կազմել զեկուցագիր՝ հաշվետվության տեսքով, լ) սահմանված դեպքերում և կարգով կիրառել զենք, ֆիզիկական ուժ, հատուկ և տեխնիկական միջոցներ, խ) ցուցաբերել առաջին օգնություն, ծ) պահպանվող օբյեկտում հետևել անվտանգության ընդհանուր կանոնների պահպանությանը: Կատարել Պատվիրատու կողմից օրինական հանձնարարականներ անցագրային ռեժիմի կարգի փոփոխության հետ կապված: կ) հերթափոխի ընթացքում իրականացնել տարածքի վերահսկողություն, հասարակական կարգի վերահսկողություն, կանխել աչքին տեսանելի գույքի և սարքավորումների չարտոնված տեղաշարժը, արագ արձագանքել արտակարգ իրավիճակների դեպքերում/հրդեհ, երկրաշարժ, ահաբեկչություն և այլն/: հ) հերթափոխի ընթացքում ապահովել իր կողմից պահպանվող տարածքում շրջայցի իրականացում, ըստ Պատվիրատույի և Կատարողի միջև ժամային կարգով համաձայնեցմանը: Ստորև ներկայացվում է վերահսկողության տակ գտնվող մասնաշենքի և տարածքների մակերեսները, մուտքերը և ծառայության ժամանակամիջոցը. Պահպանության հանձնվող օբյեկտի ընդհանուր մակերեսը կազմում է շուրջ 375մ^2: **Վճարումն կկատարվի փաստացի մատուցված ծառայության համար՝ ամսական կտրվածքով, որի հաշվարկը կիրականացվի հիմք ընդունելով**					

		մասնակցի կողմից ներկայացված գնային առաջարկը:					

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
<<Կոնվերսբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 1930059757870100
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝Լ.Մնացականյան

---------- Կ.Տ
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
<<Գարդիան>> ՍՊԸ
Ք.Երևան, Մարգարյան նրբ.7,տարածք 23
<<Անելիք Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11800082516600
ՀՎՀՀ 01273049
Տնօրեն՝ Ա. Գևորգյան

---------- Կ.Տ
/ստորագրություն/

Հավելված N 2
«28» փետրվարի 2018թ. կնքված
ՓՄՁ-ԶԱԿ-ԳՀԾՁԲ-2018/2 *ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

Ծառայության															
հրավերով նախատեսված չափաբաժնի համարը	գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV)	անվանումը	դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 2018թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում**												
			հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը
1	79711130	Պահնորդական ծառայություն	-	-	276000	552000	828000	1104000	1380000	1656000	1932000	2208000	2484000	2760000	**2760000**

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են ամբողջական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
Հայաստանի ՓՄՁ ԶԱԿ հիմնադրամ
Ք.Երևան, Մ.Մկրտչյան 5ա
<<Կոնվերսբանկ>> ԲԲԸ
Հ/Հ 1930059757870100
ՀՎՀՀ 02562459
Տնօրեն՝ Լ.Մնացականյան

---------- Կ.Տ
/ստորագրություն/

ԿԱՏԱՐՈՂ
<<Գարդիան>> ՍՊԸ
Ք.Երևան, Մարգարյան նրբ.7,տարածք 23
<<Անելիք Բանկ>> ՓԲԸ
Հ/Հ 11800082516600
ՀՎՀՀ 01273049
Տնօրեն՝ Ա. Գևորգյան

---------- Կ.Տ
/ստորագրություն/